# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 218

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ, ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-029-0004-0011 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՆՈՐԱՅՐ ԻՄԵՆԻ ՄԱՏԻՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 15.05.200 1Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նորայր Մատինյանի կողմից ներկայացված դիմումը, ժառանգության վկայագիր՝ գրանցամատյան 2436, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 8-րդ և 16-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 3-րդ կետի ը ենթակետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ որոշում եմ.

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0004-0011 ծածկագրում գտնվող 1946.8 քմ բնակելի կառուցման հողամասի հողահատկացման հիմքերը՝ ա/ Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0004-0011 ծածկագրի հողմասի մակերեսը 1946.8 քմ բ/ հողմասի սահմանները և հատագիծը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 1946.8 քմ հողմասի 1200 քմ հողամասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Նորայր Մատինյանին, մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 300 քմ հողամասը անհատույց սեփակնության իրավունքով հատկացնել՝ Նորայր Մատինյանին:
3. Անհատույց տրամադրված հողամասի չափից 446,8 քմ ավել հողամասը ուղղակի վաճառքով օտարել Նորայր Մատինյանին տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30 տոկոսով: Գյուլագարակի համայնքապետարանի թիվ 900255105034 հիաշվեհամարին ենթակա է վճարման 45150/քառասունհինգ հազար հարյուր հիսուն/ ՀՀ դրամ:
4. Նորայր Իմենի Մատինյանի կողմից Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0004-0011 ծածկագրում գտնվեղ, այլ անձաց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և

հակադիր սերվիտուտ չառաջացնող՝ 1970 թվականին կառուցված 88,60 քմ նկուղի, 1970 թվականին կառուցված 5,40 քմ աստիճանավանդակի, 1970 թվականին կառուցված 94,70 քմ բնակելի տան, 1970 թվականին կառուցված 21,70 քմ բաց պատշգամբի,1975 թվականին կառուցված 42,10 քմ անասնագոմի և 1980 թվականին կառուցված 6,70 քմ բաղնիքի նկատմաբ Նորայր Իմենի Մատինյանի սեփականության իրավունքը:
5.Հողամասում 2008 թվականին ինքնակամ կառուցված է՝ 32.80 քմ անասնագոմ:
6. Հողամասին տրամադրելի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնք, գյուղ Գյուլագարակ 1 փողոց թիվ 67:

7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2021 թ. 06 08
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 219

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի 06-027-0054-0009 ծածկագրի տնամերձ հողամասին և բնակելի տանը՝ 0,091հա, տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Գարգառ, 4-րդ փողոց, թիվ 23:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

20 21 թ. 06 09
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 220

### ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՐԳԱՌ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ , ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ,ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով միջգերատեսչական հանձնաժողովի 08.04.2021 թ.-ի թիվ 78 եզրակացությունը,Գյուլագարակ համայնքի ավագանու 16 Սեպտեմբերի 2020 թվականի թիվ 53-Ա որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ և 31-րդ կետերով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ, ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ՝ որոշում եմ

1.Հայաստանի Հանրապետության Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի վարչական սահմաններում գտնվող քաղաքացիների Վառինկա Հովհաննիսյանի և Գագիկ Շահվերդյանի համատեղ սեփականությունը հանդիսացող 06-027-0143-0002 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,1694 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող /4-րդ խումբ/ գործառնական նշանակության 0,1694 հա հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2.06-027-0143-0002 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,1694 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող /4-րդ խումբ/ գործառնական նշանակության հողամասի կադաստրային արժեքը կազմում է ՝ 114770 /մեկ հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ:

3. Հողամասի կադաստրային արժեքի՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը կազմում է ՝ 455440/չորս հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր քառասուն / ՀՀ դրամ:

4. Եռամսյա ժամկետում 455440/չորս հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր քառասուն/ՀՀ դրամը վճարել համայնքապետարանի 900255105034 հաշվեհամարին:
5.Հողամասի կադաստրային արժեքների տարբերությունը վճարելուց հետո հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված բնակավայրի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
6.Հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ,Գյուլագարակ համայնք գ.Գարգառ Կենրոնական փողոց թիվ 3 տուն :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

20 21 թ. 08 09
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 221

### ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիլյամ Հարությունյանի կողմից ներկայացված դիմումը՝ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի գ. Գյուլագարակ 2-րդ փողոց 60 հողամասի հասցեում նրա կողմից ինքնակամ կառույցների օրինականացնելու խնդրանքը, 25.09.2020 թ. N 25092020-06-0023 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով ՝ որոշում եմ.

1.Օրինականացնել Վիլյամ Հարությունյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 1300 քմ հողամասում ինքնակամ կառուցված՝ 80,49 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 43,70 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը,24,33 քմ արտաքին մակերեսով հյուրատունը և 5.17 քմ պարիսպը:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 80,49 քմ արտաքին մակերեսով բնակելի տան համար 59810 / հիսունինը հազար ութ հարյուր տաս/ ՀՀ դրամ, 43,70քմ արտաքին մակերեսով բաց պատշգամբի համար 32470 /երեսուներկու հազար չորս հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ,24,33 քմ արտաքին մակերեսով հյուրատան համար 36160 /երեսունվեց հազար հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ, 5,17 քմ պարիսպի համար 4240/չորս հազար երկու հարյուր քառասուն/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճարի չափը կազմում է՝ 132680 /մեկ հարյուր երեսուներկու հազար վեց հարյուր ութսուն / ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255000078 հաշվեհամարին:
3. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները

ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2021 թ. 06 10
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 222

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գոյություն չունեն այլ անձանց պատկանելու վերաբերյալ որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր, այն Հայաստանի Հանրապետության կառավարության 04.08.2005 թ. N 1442 - ն որոշմամբ չի ընդգրկվել համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողամասերի ցանկում,Գյուլագարակ համայնքի ավագանու 15.04.2021թ.-ի թիվ 24 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 59-րդ հոդվածներով, 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանի 2-րդ գլխի 5-րդ կետով կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է՝

1.Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի վարչական սահմաններում գտնվող 06-104-0125-0015 կադաստրային ծածկագրի 0,37237 հա մակերեսովգյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նկատմամբ ճանաչել համայնքի սեփականության իրավունքը և միացնել համայնքի հողային ֆոնդին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2021թ. 06 10
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 223

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը, որոշում եմ.

Հաստատել Գյուլագարակ համայնքի 2021թ. տարեկան բյուջեի եռամսյակային բաշխման մեջ կատարված փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2021թ. 06 10
գ.Գյուլագարակ